



«ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅՑ ՈՐ ԲՆԵՒ ԳԱՆ» ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՄԱՐՏ 1. 1877.

ԹԻԻ 3.

ՀԵՂԻՆԷ ԵՒ ԱՆՈՐ ՏՈՒՆԿԵՐԸ

Հեղինէ շատ ուրախ է որ երկար և ցուրտ ձմեռուան յաջորդեց դեղածիծաղն դարուն: Փոքրիկ աղջիկը բոլոր ձմեռը շատ հոգ տանելով իր առնկերը ցուրտէն պահեց: Տունկերը հիմա բացուիլ սկսած են, և դարնան տաք արեւն և հեղիկ անձրեւները քանի մը անգամ ևս վայելելն ետքը աւելի դեղեցիկ պիտի ըլլան:

Ի՞նչ զարմանալի է տունկերուն մանր մանր սերմերէ յառաջ գալը: Ո՞րչափ զարմանալի է նաև մեր մարմիններուն աճումը: Մանկիկը մեծնալով կ'ըլլայ սղոյ և սղան կ'ըլլայ մարդ: Մեր մաքերն ալ կը մեծան, երբ զանոնք կը մշակենք:

Մեր հոգիներն ալ անխնամ թողելու չենք, վասն զի անոնք յաւիտեան կ'ապրին: Գիտե՞ք որ Սուրբ գիրքը սրբութեան պտուղն է, բուն վրայ կը խօսի: Ուստի պարտինք մեր հոգիներուն մշակութեանը խնամ տանիլ Սուրբ գիրք կարդալով, աղօթելով, այլոց բարիք ընելով, և մեր սիրելի փրկչին շատ մօտ ապրելու ջանալով: Մեր փրկիչը պիտի օգնէ մեզի մեր սիրտերուն տունկերը երկնային դրախտին յարմար առնկեր ընելու:



Տղայց Աւետարտի համար

«ՎՆԱՄՆ ԱՆՈՐ ԵՂՈՒ»

Յովհաննէս և Թովմաս գրացի և հասակակից ըլլալով միշտ մեկտեղ դըպ-

ՄԱՐԿՈՍԷՆ ԸՆԹԱ ԲԱՅՈՒՄ ԵՍՏԵՆ

րոց կ'երթային և մեկտեղ կը խաղային: Թովմաս հեզ էր և ծանրաբարոյ, իսկ Յովհաննէս բարկացուտ և կառուսէր ըլլալով, երբ խաղի մէջ կը յաղ-

թուէր, կը բարկանար և կռիւ կը հանէր:

Օր մը որ ընկուզի կը խաղային, Յովհաննէս կորսնցուց, և Թովմաս տառ-

անո՛ր բոլոր ընկողնները՝ Յովհաննէս նեղացած ըլլալով առիթ կը վնասէր կուտի ։ Վերջապէս իր ընկողնները թողնուածն ետ առնել ուղեց նորէն խաղալու համար ։ Բայց թողնուած չուղեց տալ ։ և երբ տեսաւ որ Յովհաննէս կը ուխտի պիտի հանէր ։ փախաւ ։ Յովհաննէս աւոր ետեւէն վաղեց ։ Բայց չկրցաւ զանի բռնել ։ և տեսնելով որ թողնուած իրենց տանը դուռը հասնելով ներս պիտի մտնէր ։ իսկոյն գետնէն քար մը առաւ և նետեց թողնուածին ։ Բայց քարը ետ դառնալով զՅովհաննէս վիրաւորեց ։ վասնզի երբ թողնուած դուռը կը գոցէր ։ քարը հոն հասաւ ։ ուստի և դրան զարնուելով ետ մղուեցաւ ։ և եկաւ դպար Յովհաննէսին ճակատին որ սկսաւ արիւնիլ ։ այս պէս Քան անդ էլ ։



ԿԱՏՈՒ ՄԸ ԳՆԹԵՆ ՄԻԵՏ ԱՆՈՐ ՈՒՅՈՑ ՎՐԱՅ ԿԸ ԿԵՆՈՐ

Ի վանքի պիտի պատմեմ թէ ով էր այս տղան ։ Փրովլիաֆոզոյ գիւղը ի վանքի գոյայելիչ անուն մարդ մը կար ։ Թերեւս այս մարդուն անունը զարմանալի թուի թուի ոմանց ։ Բայց զարմանալի չէ ։ վասնզի կը նշանակէ նիկողայոսեան Յովհաննէս ։ Բուսաց լեզուին մէջ Վեջայերէն էւ մասնկան կամ արդ բառին իմաստն ունի ։ Երբունի ի վանքին տէրն որ մը բանի մը համար անոր նեղանալով ։ ըստ օրինաց աղերսագիր մատոյց կառավարութեան և զանի Սիպերիա աքսորուելու դատապարտել տուաւ ։ Այն միջոցին ի վանքին կինը մեռաւ ։ և փեղոյ որ արդէն քոյր կամ եղբայր չունէր անոք և անօգնական մնաց ։ Ի վանք ըստ սովորութեան հրաժարական ողջոյնը տուած էր բոլոր ազգականաց և բարեկամաց զորո թերեւս պիտի չտեսնէր երբէք և երբ զինուորներն այն գիւղը եկան զի վանք ուրիշ աքսորելոց հետ տանելու ։ ամէն մարդ ի վանք արդէն մեռած կը համարէր ։

Ի վանք իր աքսորակիցներուն հետ գիւղէն ճամբայ ելաւ ։ Շղթայով զոյգ զոյգ կապուած աքսորեալք՝ ուրիշ երկայն շղթայով մ'ալ իրարու կապուած էին ։ Աքսորեալք այս անգամ աւելի էին քան երկու հարիւր ։ և քալելով պիտի երթային միջին Բուսիայէն մինչև Սիպերիոյ հիւսիսային ծայրը ։ Կրացիք գիտէին թէ անպարտ էր ի վանք ։ Բայց աքսորուելէն ետքը զանի շուտով մոռցան ։ Գիւղին մէջ մէկը միայն չմոռցաւ երբէք զի վանք ։ այսինքն ի վանքի որդին փեղոյ ։ Թշուառ տղան կը յիշէր միշտ իր հօրը սէրն ու գօրովը ։ շատ անգամ միտքը կը բերէր այն օրերը որ ձիով անտառները կ'երթային փայտ ժողվելու ։ կը յիշէր նաև մօրը սա վերջին խրատը ։ « փեղոյ ։ փեղոյ ։ միշտ օգնէ հօրդ ։ » Աստիք յիշելով փեղոյ կը տրամէր և կը յուսահատէր ։ Շատ աչալուրջ և հանճարեղ չէր ։ և որ աւելի գէշ է՝ կարողաւ և գրել ալ սորված չէր ։ փայտ կտրել և կաղամախուոյ կեղեւներէն կողով շինել միայն գիտէր ։ Բայց ունէր լուսագոյն բան մը ։ այն էր հօրը համար անջինջ սէր սըրտին մէջ ։ Իրիկուն մը մինչ փեղոյ կրակարա-

ՄԱՐԻՅԱ ՏԻԿՆՈՋ ՕԳՆԱԿԱՆԸ

Մարիցա տիկին ծեր և այրի էր և քաղքին ծայրը փոքր տան մը մէջ կը բնակէր ։ Մարիցա տիկին աղքատ էր ։ և գրեթէ մարդ չէր երթար անոր բով ։ Բոլոր օրն իր սենեկին մէջ կը նստէր և դուլպայ կը հիւսէր ։ և փոքր սպիտակ կատու մը գրեթէ միշտ անոր ուսոց վրայ կը կենար ։ կատուն կոյր էր ։ Բայց միշտ գոհ կ'երեւէր ։ և երջանիկ էր երբ իր զուխը Մարիցա տիկնոջ այտերուն վրայ կը հանգչեցնէր ։

Մարիցա տիկին իր կատուն անունն « Օգնական » դրած էր ։ կատուի մը համար տարօրինակ անուն էր այս ։ Բայց Մարիցա տիկին աղէկ գտած էր այս անունը ։ վասնզի կատուն կ'օգնէր անոր գոհ ըլլալ իր վիճակէն ։ և երջանկութիւն գտնել ամէն բանի մէջ զոր Աստուած կը զրկէր անոր ։

ՓԵՂՈՅ ԻՎԱՆՕՎԻՉ

ԿՈՄ

ՍԻՊԵՐԻԱ ԱՔՍՈՐԵԱԼ ՄԸ

Բուսիոյ Մամարա նահանգին փրովլիաֆոզոյ գիւղին գերեզմանոցը փայտէ խաչանշաններուն մէջտեղ չիրիմ

Կ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

նին քով նստած կը խորհէր թէ ինչ պէս կրնար օգնու թիւն մը ընել իր հօրը, յանկարծ միտքը եկաւ երթալ տեսնել գիւղին քահանան զոր Բուսք «փոլ» կը կոչեն: Քահանան որոյ անունը Միքայէլ էր՝ բարի և աղնուա սիրտ ըլլալով, գիտնալով նաև որ փեղրոյի հայրն առանց յանցանաց աքսորուած էր, ուրախ եղաւ երբ իմացաւ որ փեղրոյ կը խորհէր օգնել իր հօրը: Տղան գիտէր թէ հայրը երկայն ճամբորդութիւն մը ըրած էր, բայց չէր գիտէր թէ ցամաքէն ըրած էր այն ճամբորդութիւնը թէ դեռեւն: Լսած էր նաև որ հայրը Սիպերիա գացած էր, բայց չէր գիտէր թէ ինչպիսի տեղ էր Սիպերիա: Միքայէլ քահանան հին աշխարհացոյց մը հանելով աշխատեցաւ քանի մը տեղեկութիւն տալ փեղրոյի անոր հօրը գտնուած տեղը ոյն և հոն տանող ճամբուն վրայ, բայց տղան աշխարհացոյցէն շատ բան չկրցաւ հասկնալ:

Իվանի աքսորուելէն երկու տարի ետքը փերեզակ փոլիաքոֆի փեղրոյի գիւղը եկաւ: Փեղրոյ իր հօրմէն լուր առնելու համար միշտ ասոր անոր կը դիմէր, և օր մը երբ սրճարանը նստած էր, փոլիաքոֆ ըսաւ. «Փերեզակ մը որ նոր դարձած է Սիպերիայէն՝ ինձի պատմեց թէ իվան Եաքութսքի մօտ փոլիոֆսքի գիւղը տարուեցաւ:» փոքր փեղրոյ լսելով այս խօսքը՝ լռեց, և երեկոյն իր սիրելի բարեկամին, Միքայէլ քահանային երթալով, անոր հետ աշխարհացոյցը նայեցաւ, և բաւական դժուարութեամբ գտաւ Եաքութսք քաղաքը և հոն երթալու ճամբան: Այնուհետեւ փեղրոյ հաստատ կերպով միտքը դրաւ ազատել իր հայրը, կամ զանի գտնել: (Պիտի շրտնախոյն)

ՍԱՄՊՈՑԻ ՍԽԱԼԱՆՔԸ

Գերութեան բարձմանէն շատ տարիներ առաջ Ափրիկէի ծովեզերքէն մանուկ գերի մը բռնուելով Անգղիա տարուեցաւ: Այս գերոյն տէրերը թերեւս անոր հետ այնպէս խիստ չվարուեցան, ինչպէս սովորաբար կը վարուին մարդիկ, երբ հորթ մը կամ մարուկ մը տեղէ մը ուրիշ տեղ կը փոխադրեն: Բայց Սամպոյ անբան անասուն չէր, ուստի և իր հայրենեաց, ծնողաց և եղբարցը կարօտով կը մաշէր և կը հառաչէր: Սամպոյ Անգղիոյ Լիվրփուլ քաղաքը տարուելով հոն հարուստ տիկնոջ մը ծախուեցաւ: Այն ատեն Անգղիոյ մէջ հարուստ տիկին

ներէն շատերը սեւ սպասաւորներ ունէին, որ տիկնաց աթոռներուն ետին կը սպասէին անոնց հրամանները կատարելու, ոչոյսնքն անոնց թէյի գաւաթները լեցնելու և ուրիշ ծառայութիւններ ընելու:

Սամպոյի ալ գործն էր այս տեսակ ծառայութիւններ ընել: Սեւ տղան տիկինը տեսնելու համար փառաւոր սենեակ մը տարուեցաւ, ուր ջահեր, հայելիներ և ուրիշ զարդեր կային: Սամպոյ քիչ մը ապշեալ մնալէն ետքը «Ո՛հ եղբայր իմ, եղբայր իմ!» գոչելով մեծ հայելոյ մը վրայ նետուեցաւ, և հայելին կտոր կտոր ըրաւ:

Ափրիկեցի տղան բնաւ հայելի տեսած չէր, ուստի երբ իր պատկերը տեսաւ հայելոյն մէջ, կարծեց թէ եղբայրն Ափրիկէէն զանի տեսնելու եկած էր: Կարծենք թէ Սամպոյ իր այս սխալանաց համար չպատժուեցաւ, և անոր տիկինը շարժելով անոր եղբայրսիրութենէն քաղցրութեամբ վարուեցաւ անոր հետ և զանի սիրեց:



ՈՒՐԻՇ ՔԱՆԻ ՄԸ ՋՐԱՅԻՆ ԲԶԷՁՆԵՐ
Ժամանակ մը Ջրային բզէզներու պատկերներ հրատարակեցինք: Այս անգամ ալ ուրիշ քանի մը Ջրային բզէզներու պատկերներ կը հրատարակենք: Վերի պատկերին մէջ տեսնուած բզէզները «գայիմպէթ» կը կոչուին: Ասոնք իրենց ազիններէն ներս օդ տանելու գործարան մը ունին: Կը տեսնէք որ ջուրին տակը գտնուող բզէզներուն ազիններուն քովը ջուրի պղպջակներ կան: Այս բզէզներուն վրայով աւելի հետաքրքրական բան մը կայ: Անոնց աչուրները երկու մաս բաժնուած են,

մէկ մասը կը գործածուի ջուրին տակը, և միւս մասը ջուրէն դուրս:

Երբ բզէզները ջուրին տակն են, տարօրինակ կերպով անդին ասդին կը պտտին, և որչափ արագ երթան, իրաւում չեն զարնուիր, թէև շատ անգամ քսան հատը մէկտեղ կ'ըլլան:

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՐԳ

Գէորգ և Կարապետ անուն երկու եղբարք կային: Օր մը Գէորգի դասընկերներէն մին ըսաւ անոր. «Գէորգ, կը լսեմ թէ կրտսեր եղբայրդ Կարապետ Գրիստոնեայ եղաւ. ստոյգ է:» Գէորգ պատասխանեց, «Աղէկ չեմ գիտեր, բայց կրնամ իմանալ:» Ինչպէս ակնագործ մը փորձաքարի դարնելով կրնայ հասկնալ թէ քար մը ստուգիւ աղամանդ է թէ կեղծ քար, նոյնպէս Գէորգ ջանաց փորձաքարի դարնելով հասկնալ թէ արդարեւ Կարապետ Գրիստոնեայ եղած էր: Օր մը Կարապետ կը պատրաստուէր իր թուռցիկը թռցնելու և Գէորգ անոր թուռցիկն առնելով կտորեց: Անգամ մ'ալ երբ Գէորգ Կարապետին քովէն կ'անցնէր, դիտմամբ անոր ոտքին վրայ կոխեց. ուրիշ անգամ ալ Կարապետին փոքրիկ շանը քար նետելով վնասեց անոր: Կարապետ ի բնէ բարկասիրտ էր: Գէորգ աղէկ գիտէր որ եթէ առաջ վերը յիշուած բաներէն մին ընէր, Կարապետ շատ պիտի բարկանար, բայց հիմա Գէորգին դէմ, որ այն բաները կ'ընէր, չբարկացաւ և բերան անգամ չբացաւ. թող թէ իր հին սովորութեանը համեմատ անոր բռնցիկ հարուածներ տալ, կամ զայրագին աչք նախատինք թափել անոր վրայ: Գէորգ այն փորձերուն մէջ Կարապետին համբերութիւնը տեսնելով, երբ հանդիպեցաւ իր վերոյիշեալ դասընկերին, անոր ըսաւ. «Ինչ որ լսեցիր՝ շիտակ է. Կարապետ ստուգիւ Գրիստոնեայ եղած է. ես զանի քրեշու հասկցայ:»

Ան որ բնաւ բան չընէր, չարութիւն ընելու ճամբուն մէջ է: Ծոյլ մանուկ մը վերջապէս կարօտ և թշուառ մարդ մը կ'ըլլայ:



ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ՅԱՆՈՒՍ ՄԱՆՈՒԿ ԵՂԱՒ

ՏՂՈՒ ՄԸ ԽՆԻԱԸ

Մարիամ օր մը նայելով իր փոքր եղբորը որ օրօրոցին մէջ պառկած էր՝ հարցոց իր մօրը, «Մայրիկ, Յիսուս այս մանկան պէ՛ս էր» և առանց պատասխանին սպասելու, յարեց. «Ինչո՞ւ համար Յիսուս մեզի պէս մանուկ եղաւ:» Աղջկան այս վերջին հարցմանը սապէս պատասխանեց մայրը, Յիսուս մանուկ եղաւ, որպէսզի ցուցնէ թէ աղէկ կը հասկնայ մանկանց վիճակը և անոնց կարօտութիւնները. և հիմա փոքր տղոց կ'ըսէ. «Ես ալ մանուկ եղայ, և դիտեմ ինչ է մանկութիւնը. ինձի եկէք, մի վախնաք ինձի պատմել ձեր դժուարութիւնները և փորձութիւնները, ձեզի ուրախութիւն և վիշտ պատճառող բաները: Ես ձեզի կը սորվեցնեմ թէ որն է ձեր երկնաւոր Հօրը հաճելի ըլլալու ճամբան:» Ասոր վրայ Մարիամ դարձեալ հարցոց. «Յիսուս պիտի կատարե՞ իր խոստումը», և առանց սպասելու մօրը պատասխանին, ըսաւ. «Այո՛, գիտեմ որ Յիսուս իր խոստումը պիտի կատարէ:»

Օր մը մայրը դուրս գնաց, և Մարիամ իր փոքր եղբորը հետ առանձին մնաց առանց: Այս միջոցին տղան սկսաւ լայ: Մարիամ շատ աշխատեցաւ լռեցնել տղան. մերթ քաղցր խօսքեր կ'ընէր անոր, մերթ կը խնդար, մերթ իր խաղալիքները բերելով անոր հետ կը խաղար: Ետքը զանի դուրս հանելով պտտցոց, և դարձեալ ներս բերելով օրօրոցը դրաւ և սկսաւ օրել, բայց տղան չդադրեցաւ լայէն: Վերջապէս Մարիամ ալ պիտի լար, բայց ինքի խորհելով ըսաւ. «Յիսուս ամէն բան գիտէ, անկէ օգնութիւն խնդրեմ եղբորս լացը կտրելու», և օրօրոցին քով կենալով սկսաւ աղօթել այսպէս. «Տէր Յիսուս, դուն կտրէ եղբորս լացը, և անոր հանգիստ շնորհէ միջեւ որ մայրս դայ:» Այս խօսքէն ետքը Մարիամ պազաւ եղբորը երեսը և անոր քով նստաւ: Ասոր վրայ տղան լացը կտրեց և սկսաւ խնդալ: Մարիամ հաւատաց թէ Յիսուս խնդացոց իր եղբայրը և անոր հանգիստ շնորհեց:

ԱՆՀԱՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԻ ՄԸ

Երիտասարդ մը որ մեծ վարժարանի մը մէջ ուսանէր կը սորվէր օր մը բարեպաշտ մարդու մը ըսաւ. «Ես Մուրը գիրքը չեմ ընդունիր, ոչ արքայութեան և ոչ դժոխոց կը հաւատամ:»

Բարեպաշտ մարդը հարցոց երիտասարդին. «Կը հաւատամ թէ աշխարհի վրայ Գողիա, Իտալիա և Բուսիա անուն երկիրներ կան:»

Երիտասարդը պատասխանեց. «Այո՛, կը հաւատամ որ այնպիսի երկիրներ կան, վանդի թէեւ ես տեսած չեմ այն երկիրները, բայց շատերը տեսած են:»

Բարեպաշտ մարդը դարձեալ հարցոց. «Ուրեմն, դուն կը հաւատաս միայն այն բաներուն զոր տեսած ես, և կամ ուրիշները տեսած են:»

Երիտասարդն ըսաւ. «Այո, չեմ հաւատար այնպիսի բաներու զոր ոչ ես տեսած եմ և ոչ ուրիշները:»

Բարեպաշտ մարդը շարունակեց իր հարցումն և ըսաւ. «Երբէք տեսած ես քու խելքդ:»

Երիտասարդը, «Ոչ,» պատասխանեց:

Բարեպաշտ մարդն առաջ տարաւ իր հարցումն և ըսաւ. «Գիտե՞ս ուրիշ մը որ խելքդ տեսած է:»

Երիտասարդն այս հարցման ալ «Ոչ,» պատասխանեց:

Ասոր վրայ բարեպաշտ մարդը վերջին անգամ հարցոց. «Կը հաւատամ թէ դուն խելք ունիս:»

Երիտասարդն այս հարցման պատասխան չկրցաւ տալ:

ԱՂԵՎ ՀԱՇԻԻ

Սկզբունք մէջ մարդ մը դաշտերը պտտելով տեսաւ քանի մը մարդ որ ոչխար կը լուային: Զուրին մօտ, ուրուն մէջ ոչխարները կը լուացուէին, փոքր փարախ մը կար, ուր տասը ոչխար պատրաստ կը կենային լուացուելու: Վերջոյնեալ մարդը մինչ ոչխարներուն լուացուելը կը դիտէր, շուն մը որ հոն փարախին մօտը պառկած էր՝ գրաւեց անոր ուշադրութիւնը: Շունը տեսնելով որ փարախին ոչխարներուն լուացումն աւարտելու վրայ էր, ինք իրեն գնաց ոչխարաց հօտը, և տասն ոչխար առնելով բերաւ փարախը ուր լուացուելու ոչխար մնացած չէր: Մարդը տեսնելով որ շունն այնչափ ոչխար միայն բերաւ փարախը որչափ յառաջ կար հոն, այսինքն տալով հատ միայն, զարմացաւ, և սկսաւ աւելի ուշադրութեամբ դիտել: Շատ

աւելի եղաւ անոր զարմանքը տեսնելով որ, երբ փարախին մէջ երեք ոչխար միայն մնաց, շունը դարձեալ երթալով տասն ոչխար ևս բերաւ հօտէն: Շունն այսպէս շարունակեց բոլոր օրը: Ամէն անգամ որ հօտը կ'երթար լուացման համար նորէն ոչխար բերելու, տասնական հատ միայն կը բերեր, և միշտ կ'երթար՝ երբ երեք ոչխար միայն կը մնար փարախը:

Թերեւս կը խորհէր թէ մինչև որ ոչխարները լուացող մարդիկ այն երեքը լուային, ինք բաւական ժամանակ պիտի ունենար նոր տասը ոչխարը փարախը բերելու:

ՍՈՒՐԲ ԳԻՐԻՔ ԿԱՐԳԱՅՈՂ ՓՈՒԲԵՐԻՅ ՏՂԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ը հատարակ է, և լեռան մը գլուխը զարմանալի շարժում կայ: Այս լեռն անբնակ է, բայց այսօր շատ բազմաթիւն կը տեսնուի հոն: Զոհի համար զենուած զուարակ մը կայ մեծ սեղանի մը վրայ: Սեղանին բոլորտիքն իբր հինգ հարիւր հոգի ժողոված կը խաղան, կը ցախկեն, և սուր դանակներով և գեղարդներով իրենց մարմինները կը կտրուեն: Այս վիրաւոր և արիւնալից մարդիկ բարձր ձայնով կը պոռան: Երբունի մը որ անոնց քով կեցած է՝ կարծես թէ զանոնք կը ծաղրէ: Վերջապէս երբ արեւը մարմններու կը մօտենայ, վերջոյն յիշուած ծերունին յառաջ կ'երթայ դէպ ի կիսակործան սեղանի մը, զայն կը նորոգէ, և այլոց օգնութեամբ այն սեղանին վրայ կը դնէ ուրիշ զուարակ մը որ նոյնպէս զոհի համար կտոր կտոր եղած է. և անոր վրայ ջուր կը թափէ: Ապա ձեռուրները վերցնելով աղօթք կ'ընէ ճշմարիտ Աստուծոյ: Յանկարծ սեղանին վրայ կրակ տեսնուելով, քիչ ժամանակի մէջ կ'այրէ փայտերը և զուարակը, ջուրերն անդամ կը լափէ: Ասոր վրայ ժողովուրդն ուրախութեան ձայներով կը թնդացնէ օդը:

Այս ի՞նչ լեռ էր: Երբունին ո՞վ էր ի՞նչ եղան այն մարդիկը որ ջուրային իրենց սեղանէն կրակ հանել, բայց չյաջողեցան: Այս պատմութիւնն ո՞ր կը գտնուի:

ԱՆՅԵԱԼ ԱՄՄՈՑ ՀԱՐՅՄԱՆՑ ՊԱՏՄԱԽԱՆ

Գաւիթ թագաւորն Արիստոքանայ երեսէն կը փախէր: Սիրա էր որ էլ չէրն ու պաշարը բերաւ: Քարեր նստողն էր Սեմէի: Ի թագ. ԺԶ:

Ամերիկայի միսոնոսարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ. Գ. ԿՐԻՆ
Ֆիլաճանքը բողոքու, Ամերիկան իսան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՒ ՊՈՅԱՅԱՆ